Ստուգման և կիսամյակային, տարեկան գնահատման կարգը. սովորողի ուսումնական թղթապանակի բովանդակությունը, ինքնաստուգման, ստուգողական առաջադրանքների ժամանակացույցը և բովանդակությունը

Կարևորվում է գործունեությունը, գնահատվում՝ գործունեությունը և դրա արդյունքները:

Գործունեության գնահատումը վերաբերում է այն բազմազան առաջադրանքներին ու իրավիճակներին, որոնցով սովորողը հնարավորություն է ստանում դրսևորելու գիտելիքի իր ըմբռնումը, կարողանում է կիրառել ձեռք բերած գիտելիքը, հմտությունները, կարողություններն ու մտածելու ունակությունը: Այս գնահատումն իրականացվում է ժամանակի ընթացքում՝ հիմնվելով շոշոփելի արդյունքի կամ դիտարկելի գործունեության վրա: Նման մոտեցումը խրախուսում է ինքնագնահատումը և սեփական արդյունքների վերանայումը, պահանջում արդյունքների հրապարակում-գնահատում:

Գնահատումը տեղեկատվություն հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա ուսուցման իրականացման բովանդակային և կազմակերպչական արդյունքները՝ սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման ու տիրապետման աստիճանի վերահսկելու գործընթաց է: Այն նաև սովորողների անձնային որակների ստուգումն է: Ընդ որում, սովորողը համեմատվում է ինքն իր հետ՝ պարզելով իր առաջընթացը:

Սովորողներն ուսուցչի օգնությամբ, ինքնագնահատմամբ , փոխադարձ գնահատումների, հասարակական գնահատման, հրապարակված նյութերի միջոցով պարզում են տվյալ ուսումնական նյութի յուրացման ընթացքի արդյունքները և իրենցից յուրաքանչյուրի առաջադիմության իրական պատկերը: Ուսուցչի սուբյեկտիվ վերաբերմունքի ազդեցությունը գնահատականի վրա այս ձևով նվազագույնի է հասնում, քանի որ գործ ունենք արդեն հրապարակված աշխատանքի հետ: Սովորողի՝ տվյալ պահին ունեցած ձեռքբերումները համեմատվում են պետական չափորոշիչների պահանջների հետ: Այս դեպքում միավորային կամ որևէ այլ պայմանանշաններով գնահատում չի կատարվում:

Սովորողների տնային և գործնական աշխատանքները պարբերաբար գնահատվում են: Ուսուցչի մոտ հետադարձ կապով նշվում են վերլուծություններից ստացված կարևոր արդյունքները:

Ստուգողական առաջադրանքների ժամանակացույցը և բովանդակությունը

Ստուգողական առաջադրանքների ժամանակացույցը

- դասընթացային /կազմակերպվում են յուրաքանչյուր թեմա, փաթեթ անցնելուց հետո/
- ամենամսյա /ամփոփում է սովորողի հմտությունների ձեռքբերումը ամսվա ընթացքում/
- չորս ամիս հետո /դասընթացը յուրաքանչյուր դասարանում տարեկան 16 դասաժամ է, որը անցկացվելու է չորս ամիս՝ չորսական դասաժամով/

Առաջադիմության ստուգումները գրանցվում են տասը միավորային սանդղակով: Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է ըստ կատարած աշխատանքի բարեխղճության և որակական հատկանիշների՝ քանի աշխատանք, ինչպես է կատարված:

Սովորողի ուսումնական թղթապանակի բովանդակությունը՝

1. Ուսումնական նյութեր
    - տեսանյութեր

    - ռադիոնյութեր
    - ֆիլմեր
    - շարժական /անիմացիոն նկարներ/
    - էլեկտրոնային դաս-ցուցադրություններ
    - տեսադասեր
2. Կայքի նյութերի հղումներ
3. Համացանցային քննարկումների մասնակցության հղումները

Սովորողի ուսումնական թղթապանակում հավաքվում են ոչ թե ամենօրյա աշխատանքներ, այլ հաջողված նմուշները, որոնք ընտրում է տվյալ դասի դասավանդողը:

Սովորողի ուսումնական թղթապանակը տեղադրվում է սովորողի անհատական բլոգում կամ SkyDrive-ում, հղումը ուղարկվում է ուսուցչին, կազմակերպչին, ծրագրի ղեկավարին:

Սովորողի անհատական բլոգը պետք է ունենա հստակ անվանումներով, առանձնացված բաժիններ: Բլոգի վարումը կատարում է սովորողը, դասավանդողը ընդամենը կարող է օգնել խորհրդով: Բլոգը կարող է ներառել սովորողի անձնական ցանությունները, ճաշակը, սակայն պետք է լինեն բաժիններ, որոնք կվերաբերվեն միայն ուսումնական պրոցեսին:

SkyDrive-ում սովորողը տեղադրում է իր ուսումնական նյութերը՝ ստեղծելով համապատասխան անվանումներով թղթապանակներ:

Սովորողը տարվա սկզբում հստակ որոշում է, թե որտեղ է հավաքելու իր անհատական թղթապանակը՝ բլոգում թե SkyDrive-ում և մինչև կիսամյակի ավարտ չի փոխում հավաքագրելու տեղը, այլապես կիսամյակի ավարտին չի ունենա ամբողջական փաթեթ:

Սովորողի տարեկան գնահատականը ձևավորվում է՝

• Տարվա ընթացքում բարեխիղճ կատարած աշխատանքի, ջանասիրության, երևակայության, հետաքրքիր մտքերի

- ուսումնական թղթապանակի բովանդակության
- մեդիաօլիմպիադայի, Հանրակրթական Դիջիտեքի, այլընտրանքային մեդիափառատոնի մասնակցության
- ձեռք բերած գիտելիքների և կարողությունների գործնական կիրառությունների՝ ուսումնա-հասարակական նախագծերի իրականացման
- ֆիլմերի, տեսանյութերի, ցուցադրությունների

• կիսամյակային գնահատականների հիման վրա:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է հետևյալ կերպ:

5-րդ դասարան

I մակարդակ	II մակարդակ
Ընդհանուր տեղեկություններ համակարգչի, կրիչների, ինտերնետի, թվային ինֆորմացիայի և դրանց անվտանգ շահագործման մասին **0-2 միավոր**	Live Edu համակարգ՝ էլ. Փոստ /նամակների ստացում-ուղարկում/, Sky Drive-ի, օրացույցի գործածում **0-2 միավոր**
Օպերացիոն համակարգերը, զարգացման պատմությունը, տիպերը և առանձնահատկությունները **0-2 միավոր**	Մուտքագրում, նյութերի պահպանում, թղթապանակների և փաստաթղթերի բացում-պահպանում – **0-2 միավոր**
Թվային ինֆորմացիա, դրանց տեսակները և բնութագրիչները **0-2 միավոր**	mskh.am կայք, կարծիքների հրապարակում, ծանոթացում ենթաբաժիններին, նյութերի որոնում, user-ների օգտագործում – **0-2 միավոր**
Թվային ինֆորմացիայի ֆորմատները, դրանց առանձնահատկությունները, ծանոթացում նրանց փոխարկիչներին /Converter-ների գործածում/ **0-2 միավոր**	PowerPoint ծրագրով ցուցադրությունների պատրաստում – **0-4 միավոր**
Word, Power Point, Excel ծրագրերի ավելի խորացված ուսուցում /էջադրում, համարակալում, որոնում, փոփոխում, տեղադրում, բանաձևերի և հաշվարկների գործածում, անիմացիոն ցուցադրությունների ստեղծում/ **0-4 միավոր**	Movie Maker ծրագրով ֆիլմերի պատրաստում-պահպանում – **0-4 միավոր**
Բաց վիդեոռեսուրսային կայքերում user-ների գրանցում, նյութերի տեղադրում, հղումների տրամադրում **0-2 միավոր**	Տարբեր կայքերից նյութերի ներբեռնում, օգտագործում **0-2 միավոր**
Կայքերի ադմինիստրացիա mskh.am կայքի օրինակով /նյութերի տեղադրում, որոնում, աշխատանք ենթաբաժիններում, կարծիքների հրապարակում/ **0-2 միավոր**	Ֆորմատների փոփոխում **– 0-2 միավոր**
Live Edu համակարգ՝ էլ. փոստ, Sky Drive-ի, օրացույցի գործածում **0-2 միավոր**	

6-րդ դասարան

I մակարդակ	II մակարդակ
Windows օպերացիոն համակարգի հիմնական տարրերը, հասկացությունները, առանձնահատկությունները և դերը **– 0-2 միավոր**	Ընդհանուր տեղեկություններ համակարգչի, կրիչների, ինտերնետի, թվային ինֆորմացիայի և դրանց անվտանգ շահագործման մասին **– 0-2 միավոր**
Թվային մեդիամիջոցներ. տեսակներ, բնութագրիչներ, առանձնահատկություններ և գործածում /ձայնագրիչ, թվային տեսախցիկ և այլն/ **– 0-2 միավոր**	Word, Power Point, Excel ծրագրերի ավելի խորացված ուսուցում /էջադրում, համարակալում, որոնում, փոփոխում, տեղադրում, բանաձևերի և հաշվարկների գործածում, անիմացիոն ցուցադրությունների ստեղծում/ **– 0-4 միավոր**
Ֆոտոպատումների ստեղծում՝ Photo Story /Wondershare Photo Story, …./ **– 0-4 միավոր**	Բաց վիդեոռեսուրսային կայքերում user-ների գրանցում, նյութերի տեղադրում, հղումների տրամադրում **– 0-4 միավոր**
Publisher ծրագրի գործածում /օրացույցների ստեղծում, հղումների տեղադրում, կայք-ցուցադրությունների ստեղծում/ **– 0-2 միավոր**	Կայքերի ադմինիստրացիա mskh.am կայքի օրինակով /նյութերի տեղադրում, որոնում, աշխատանք ենթաբաժիններում, կարծիքների հրապարակում/ **– 0-4 միավոր**
Live Edu համակարգում սցենարների և թղթապանակների ստեղծում, գործողություններ նամակների հետ **– 0-4 միավոր**	Live Edu համակարգ՝ էլ. փոստ, Sky Drive-ի, օրացույցի գործածում **– 0-4 միավոր**
Պատկերների մշակում, մեդիագրադարանների վարում **– 0-4 միավոր**	

7-րդ դասարան

I մակարդակ	II մակարդակ
Ֆայլային ընդլայնումներ **– 0-2 միավոր**	Windows օպերացիոն համակարգի հիմնական տարրերը, հասկացությունները, առանձնահատկությունները և դերը **– 0-2 միավոր**
Համակարգչի ծրագրային ապահովում, ծրագրային փաթեթներ և դրանց տեղադրումը Windows օպերացիոն համակարգում **– 0-2 միավոր**	Թվային մեդիամիջոցներ. տեսակներ, բնութագրիչներ, առանձնահատկություններ և գործածում /ձայնագրիչ, թվային տեսախցիկ և այլն/ **– 0-4 միավոր**
Տարրական վիդեոմոնտաժային ծրագրային փաթեթների գործածում /MS Movie Maker, Wondershare Video, AVS Video և այլն/ **– 0-4 միավոր**	Ֆոտոպատումների ստեղծում՝ Photo Story /Wondershare Photo Story, …./ **– 0-4 միավոր**
Նախնական ծանոթացում Photoshop ծրագրին, տարրական գործողություններ /նկարների ձևափոխում, գործիքների գործածում, աշխատանք գույներով, շերտերի ստացում-միավորում և այլն/ **– 0-4 միավոր**	Publisher ծրագրի գործածում /օրացույցների ստեղծում, հղումների տեղադրում, կայք-ցուցադրությունների ստեղծում/ **– 0-4 միավոր**
Բլոգերի բացում, կիրառում **– 0-6 միավոր**	Live Edu համակարգում սցենարների և թղթապանակների ստեղծում, գործողություններ նամակների հետ **– 0-4 միավոր**

8-րդ դասարան

I մակարդակ	II մակարդակ
Windows օպերացիոն համակարգի տարրական ադմինիստրացիա, ծանոթացում կառավարման վահանակին **– 0-2 միավոր**	Տարրական վիդեոմոնտաժային ծրագրային փաթեթների գործածում /MS Movie Maker, Wondershare Video, AVS Video և այլն/ **– 0-6 միավոր**
Պրոցեսները Windows օպերացիոն համակարգում, Task Manager, դերը, նշանակությունը, կիրառումը **– 0-4 միավոր**	Նախնական ծանոթացում Photoshop ծրագրին, տարրական գործողություններ /նկարների ձևափոխում, գործիքների գործածում, աշխատանք գույներով, շերտերի ստացում-միավորում և այլն/ **– 0-6 միավոր**
Photoshop ծրագրի խորացված ուսուցում, անիմացիոն նկարների ստեղծում **– 0-6 միավոր**	Բլոգերի բացում, կիրառում **– 0-6 միավոր**
Վիրուսներ, որդեր, տրոյաններ, շպիոններ, ստեղնաշարային լոգերներ՝ գրանցիչներ /տիպերը, վտանգները և պաշտպանությունը/, հակավիրուսային համակարգեր, վիրուսային բազաների թարմացում **– 0-4 միավոր**	
Որոնման համակարգերի առանձնահատկությունները, լայն հնարավորությունները, հատուկ որոնումներ **– 0-2 միավոր**	

9-րդ դասարան

I մակարդակ	II մակարդակ
Ռեգիստորներ /նշանակությունը, դերը, հետաքրքիր հնարքներ/ **– 0-6 միավոր**	Windows օպերացիոն համակարգի տարրական ադմինիստրացիա, ծանոթացում կառավարման վահանակին **– 0-4 միավոր**
Ծանոթացում ցանցերի և ինտերնետի հետ, տարրական ցանցային հասկացություններ և գործիքներ **– 0-2 միավոր**	Պրոցեսները Windows օպերացիոն համակարգում, Task Manager, դերը, նշանակությունը, կիրառումը **– 0-4 միավոր**
Վիդեոմոնտաժի տարրական հասկացությունները **– 0-4 միավոր**	Photoshop ծրագրի խորացված ուսուցում, անիմացիոն նկարների ստեղծում **– 0-6 միավոր**
Մոնտաժային ծրագրեր /Premier Pro, Vagas/ **– 0-6 միավոր**	Վիդեոմոնտաժի տարրական հասկացությունները **– 0-4 միավոր**

Գնահատումը կատարվում է հետևյալ ձևով.

Բոլոր թեմաները գնահատվում են՝ 0-2 բալանոց համակարգով /որտեղ զրո ստանում է նյութը չյուրացրած սովորողը, մեկ ստանում է թերի յուրացրած սովորողը և երկու՝ ամբողջությամբ յուրացրածը/: Թեմաները ըստ իրենց բարդության աստիճանի ստանում են իրենց 1-3 գործակիցները, որով բազմապատկվում է տվյալ թեմայից ստացված բալը: Դասընթացի ավարտին բոլոր բալային գնահատականները գումարվում են: Բալային գումարը վերջում առավելագույնը հավասարվում է 18 բալի, որը համապատասխանաբար հավասար է գնահատման 9 միավորին կամ թվանշանին:

Բալ	Գնահատական	Բալ	Գնահատական
18 բալ	9	9 բալ	4.5
17 բալ	8.5	8 բալ	4
16 բալ	8	7 բալ	3.5
15 բալ	7.5	6 բալ	3
14 բալ	7	5 բալ	2.5
13 բալ	6.5	4 բալ	2
12 բալ	6	3 բալ	1.5
11 բալ	5.5	2 բալ	1
10 բալ	5	1 բալ	0.5
		0 բալ	0

Վերջնական գնահատականի դեպքում, երբ ստացվում է ոչ ամբողջական միավոր, ապա այն կլորացվում է ի օգուտ սովորողի:

10 թվանշան կամ 20 և 19 բալ ստանում է այն սովորողը, որը մասնակցել է մեդիաօլիմպիադային, Հանրակրթական Դիջիտեքին, այլընտրանքային մեդիափառատոնին և ստացել մրցանակ: